ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ԴԱՐԱՎԵՐՋՅԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Ձմեռ ցրտաշունչ, պայծառ լուռ գիշեր՝ խորհուրդով լեցուն,
Դաշտն Այրարատյան տեղումներից վերջ ձյունով է ծածկված,
Երկնի կամարից լիալուսինն է անպարան կախված,
Հրաշալի գիշեր, հստակ ու անաղմ, աստղապարդ, շոայլ:

Ես ճանապարհորդ լուսնի լույսի տակ, լույսի ծարավով,
Իմ գլխի վերև երկինքը՝ տաճար՝ հապար գմբեթով,
Սարերն սպիտակ պատմուճան հագած որպես հարսնևոր,
Իրար մոտեցել, ձեռք-ձեռքի տվել շուրջպար են բռնել:

Ձախին իմ կանգնած պարթևահասակ Արարատն է սեգ,
Աջին՝ խոհական Արագածն է լուռ, քառաթև գագաթ,
Հայկական պարի կույգ հսկաներն են իրար դեմ կանգնել,
Այս ուշ գիշերին, միմյանցով դյութված՝ ապշել, հիացել:

Դեմ առ դեմ կանգնած, կարծես հիշում են դարերը անցյալ.
Երկար պատմություն, խորհում են խոկում և լուռ մտորում,
Լուռ է աշխարհը, քնով թաթավուն օրն է սպառվել,
Արդյո՞ք այս ժամին սարերն են իրար տեսնում, ողջունում:

Նոյն է այս պահին արբական սարի տապանից ելնում
Եվ քայլում առաջ, դեպի հողն հայոց՝ դաշտն Այրարատյան:
Լուսավորիչն է Արագած սարից, ձեռքին մի լապտեր,
Լուսապարդ տեսքով իջնում հարապատ Սուրբ Էջմիածին:

Մեկն Արարատից, մյուսն Արագածից առաջ են շարժվում,
Հողմերի շնչով, արագ ընթացքով իրար մոտենում,
Երկուսն էլ պարթև, խրոխտ, հաղթական առաջանում են,
Իրար ձեռք սեղմում, ողջագուրվում են կարոտով անհուն:

Սուրբ Էջմիածնի կամարների տակ՝ խնկով պարուրված,
Ուր Աստվածորդին փառքով Իր իջել, մուրճովն Իր խփել,
Սանդարամետի դռներն էր կողպել, չարը խափանել.
Այդ վեհավայրում նրանք իրար են ջերմ ողջագուրում:

Իրար ականջին մեկ անլսելի բառեր շշնջում,
Խոսում են երկար, տխրում ու թախծում հանկարծ հուսով լի,
Զվարթ հրճվում, երկիրն են լցնում հույսի ցոլքերով,
Երկնատուր սերը հոգին նորոգող մեկ են ընծայում:

Երկնի հարկերից իջել են երկիր սրբերը հայոց,
Վկա են դարձել այս սուրբ հանդիպման Նոյի, Գրիգորի,
Օրհնել են Փրկչի խաչի կորությամբ, այդպես հավերժել
Հայոց աշխարհի պահապան սրբոց էջքը ըղձալի:

Պատմում են նախնիք, որ նահապետներն Հայոց աշխարհի,
Հավարավյակում մեկ անգամ միայն իրար են տեսնում,
Ծրագրում բարին, վասն հայ ազգի, օրհնում ապագան,
Շնորհ են բերում մարդկանց ու ելնում դեպ աղոթարան...

Երբ Աստծու աչքն է, վերթ լիալուսին, երկնի վենիթում,
Երբ մեր աշխարհն է, երկնի օրհնությամբ, ձյունով ծածկվում,
Երբ քրտինքն հայի, վերթ աստղերի հույլ, երկինքն է պատում,
Երբ հայն է սիրով իր հողը պաշտում, անվերջ արարում...

Այնժամ մեր սրբոց հոգին իջնում է աշխարհն Հայաստան,
Իր հետ է բերում բյուր օրհնություններ և առատություն...
Որդյա՛կ, հայկապյան ազգը քո սիրիր, նախանձը վանիր
Հանդեպ ազգակցի, նրան բարձրացրու, երկրիդ տեր եղիր:

15. 07. 1997